ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2024 թվական թիվ 326-Ա

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տարածքային կառավարման մասին'' Հայաստանի հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի նիստում Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հնչեցված դիտողությունները և նկատելի թերությունները վերացնելու տրամաբանությունը՝

որոշում եմ

1. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման և ծառայությունների մատուցման որակի բարելավման նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել անհատական կազմը համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝
- աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման և ծառայությունների մատուցման որակի բարելավման նպատակով մարզի համայնքներում յուրաքանչյուր ամսվա ընթացքում պարբերաբար անցկացնել ընթացիկ աշխատանքների մշտադիտարկում: Միջոցներ ձեռնարկել մարզով անցնող միջպետական և հանրապետական ճանապարհների եզրերին և բնակավայրերի ներսում կուտակված աղբի, շինարարական աղբի, տեսանելի տարածքներում կուտակված հին և անարդյունավետ գույք հանդիսացող տրանսպորտային միջոցների կմախքների և նրանց տարբեր մասերի, չորացած և թափված փայտանյութի, ինչպես նաև այլ տեսակի աղբը հավաքելու, դրանց տեղափոխումն ու տեղադրումն աղբավայրերում կազմակերպելու գործընթացներին և կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել Տավուշի մարզպետին:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-11-27 17:04:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024թ. նոյեմբերի 27

հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
2024 թվականի նոյեմբերի 27-ի
թիվ 326-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

Նախագահ - Մ. Մելքումյան - Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ

Անդամներ

Ա. Գալստյան - Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Գ.Մելիքբեկյան- Տավուշի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Ա. Ճաղարյան - Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության ավագ մասնագետ

Ս. Չիբուխչյան - «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի տնօրեն /համաձայնությամբ/

Վ Փիլոյան - «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում և լուսավորություն» ՀՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/

Ա. Մխիթարյան - «Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/

Հ. Նասիբյան - «Նոյեմբերյանի ՀՏՍ» հիմնարկի տնօրեն /համաձայնությամբ/:

Տավուշի մարզպետի աշխատակազմի
Գլխավոր քարտուղար՝ Ա. Գևորգյան

27.11.2024

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241